# ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## Սրտաբանության Գիտահետազոտական

## Ինստիտուտ ՓԲԸ

Ք. Երևան, Պ. Սևակի 5 Հեռ. 28-85-50
28-86-90

N 30

«12» 02 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Լ.Հովհաննիսյանի անվան <<Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ-ն կարիքների համար «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքների ձեռք բերման նպատակով 07.02.2014թ. ձեզ ուղարկված Հրավերի պայմանագրի նախագծի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել չափաբաժինների փոփոխություն (հիմնավորում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մաս):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՍԳԻ-14/2-ՇՀԱՊՁԲ-11/16»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Պ.Սևակի 5, 1-ին հարկ, տնօրենի ընդունարան հասցեով, մինչև 2014թ. փետրվարի 25-ը, ժամը 11:30-ն՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մաս: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Լ.Հովհաննիսյանի անվան <<Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ-ն շենքում ք.Երևան, Պ.Սևակի 5, 1-ին հարկ տնօրենի ընդունարան հասցեում, 2014թ. փետրվարի 25-ին, ժամը 11:30-ին:

Գնման առարկա է հանդիսանում Լ.Հովհաննիսյանի անվան <<Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ կարիքների համար՝ Բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերումը:

Լ.Հովհաննիսյանի անվան <<Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ-ի կարիքների համար՝ Բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների մատակարարման (որոնք կազմված են՝ 223 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: